

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/11**

ք. Երևան

« 10 » 11 2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1), ի դեմս տնօրեն Ն. Հարությունյանի, «ԱՅԱՔՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս ընկերության տնօրեն Գ. Հովհաննիսյանի (այսուհետ՝ երկուսը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 05.11.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Սյունիքի մարզի գ.Դարբասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը (Հավելված N 1.2):

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին և տեխնիկական բնութագրին համապատասխան (Հավելված N 1 և Հավելված N 1.1):

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 240 օրացուցային օր: Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբը համարվում է կապալառուին օբյեկտը հանձնելու վերաբերյալ գրությամբ նշված մեկնարկի օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված N 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

Ընդ որում համաձայնագրով աշխատանքների կատարման ծավալները նախատեսվում են 12 ամսում կատարելու հաշվարկով՝ պայմանով, որ պակաս ֆինանսական միջոցները բյուջետավորվում և վճարումները կատարվում են 12 ամիսը լրանալուն հաջորդող մինչև 90 օրվա ընթացքում:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է

3.2.1 Աշխատանքը կատարելիս Պայմանագրով նախատեսված դեպքերում սահմանված կարգով աջակցել Կապալառուին.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնիտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնիտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները առնվազն արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից զանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 227 206 470 (երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր վեց հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որից 37 867 745 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Տվյալ տարվա հատկացված ֆինանսական միջոցների մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում:

Կանխավճար կտարամադրվի միայն այն պարագայում, երբ Կապալառուի կողմից իրականացված կլինեն շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ, իսկ նշված միջոցառումների իրականացված լինելու փաստը կարձանագրվի և պատվիրատուին գրավոր կտեղեկացվի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններն իրականացնող կազմակերպության կողմից:

Ընդ որում կանխավճար կարող է հատկացվել յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների համաձայնագրով նախատեսված արժեքի 30 տոկոսի չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝ ԱԳ=ԿԾ*ՊՏ՝

ԱԳ – ավելացվող գումար,

ԿԾ – պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%-ը,

ՊՏ – պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնան-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VԳ = UԳ / (1 + ԿԾ)$, որտեղ՝

UԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

VԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ հավելված N 2) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք, որի չափը սահմանվում է համաձայնագրով նախատեսված պահանջներին անհամապատասխան կատարված տվյալ կատարողական ակտի ընդհանուր գնի նկատմամբ և կազմում է կատարողականում տվյալ տողի (տողերի) գծով նախատեսված աշխատանքների արժեքի 10%-ը:

6.3.1 Պայմանագիրը 3.1.4 կետով նախատեսված կարգով լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3, 6.3.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ: Ընդ որում Կապալառուի կողմից համաձայնագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում հաշվարկվող տույժերը պակասեցվում են կատարողականի դիմաց վճարվող գումարից՝ պայմանով, որ համաձայնագրով սահմանված աշխատանքների վերջնաժամկետի պահպանման դեպքում պահված տույժերի գումարը վճարվում է:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Իսախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	350 000 ՀՀ դրամ
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	1 000 000 ՀՀ դրամ
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	700 000 ՀՀ դրամ

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում և պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 6) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.12 Պայմանագրի վավերապայմաններում Կապալառուի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի ապահովման և դրան կից վճարման պահանջագրի բանկային տվյալներին:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա

Ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը (համաձայնագրերը) կնքում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացնում, կամ տուժանքի ձևով ներկայացված ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
 ք. Երևան, հանրապետության հրապարակ
 կառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011048510
 ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար



Գ. Եղիազարյան

(ստորագրություն)
 Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր-1

«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ
 Կոտայքի մարզ, Բուժական 5փ., 6 փկղ. 1
 «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
 Հ/Հ 220183333537000

ՀՎՀՀ 03563013

Տնօրեն՝



Հարությունյան

(ստորագրություն)
 Կ.Տ.

Գործընկեր-2

«ԱՅԱԲԱ ՇԻՆ» ՍՊԸ
 Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Մուրացան 4
 «Արդշիրան» ՓԲԸ, «Քանաքեռ» մ/ճ

Հ/Հ 2479600415200000

ՀՎՀՀ 08916587

Տնօրեն՝



Գ. Հովհաննիսյան

(ստորագրություն)
 Կ.Տ.

Ծավալաթերթ-նախահաշիվ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Գ.ԴԱՐՔԱՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԻՊԱՅԻՆ (ՍՈՂՈՒԼԱՅԻՆ) ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԼԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Ընդամենը	Ընդհանուրը
				հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6
1-1. Համաշինարարական աշխատանքներ					
1	Ղռներ, պատուհաններ Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-1	հատ	14	81.974	1 147.63
2	Ներքին, խուլ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-2----Դ-3	հատ	43	72.068	3 098.91
3	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-4----Դ-4*	հատ	3	283.903	851.71
4	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դռների տեղադրում Դ-5, Դ-5"	քմ	3.5	124.529	435.30
5	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	7	2.038	14.27
6	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.25	41.537	218.19
7	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	13.6	39.310	533.83
8	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	10.1	41.537	419.53
9	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	9.00	33.846	304.61
10	Հատակներ խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	29.0	2.474	71.76
11	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ. բիտումի մածիկի վրա	քմ	243.23	4.740	1 152.84
12	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	114.66	1.457	167.06
13	Մամլագրամիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	103.3	13.109	1 354.15
14	Մամլագրամիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	13.42	22.232	298.35
15	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	13.42	1.457	19.55
16	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրամիտե սալերով	զծմ	171.8	1.592	273.54
17	Խեցեժալերով (նվազագույնը 8մմ հաստ.) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	63.3	10.152	642.59
18	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	զծմ	80.09	1.302	104.30
19	Վինիլային (հետերոգեն ՊՎՔ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	1124.74	13.043	14 669.93

1	2	3	4	5	6
20	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԶ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.4352	19.336	4 977.64
21	Կավրոլինից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116.8	17.347	2 026.14
22	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	1.962	67.33
23	Տանիք Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	56.9	4.348	247.39
24	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Φ 150մմ	հատ	8	6.882	55.06
25	Ջրիսս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	37.60	5.193	195.26
26	աստիճանների երկչերտ ներկում ՈՓ-115 էմալով, մախանական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.707	40.090	28.34
27	գունավոր ներկվածքով թիթեղ 700մմ լայնությամբ	գծմ	113.7	5.913	672.35
28	Թասակ գունավոր ներկվածքով թիթեղից 0.5մմ հաստ.	քմ	101.1	8.118	820.76
29	գունավոր ներկվածքով թիթեղ 300մմ լայնությամբ	քմ	58.1	8.118	471.67
30	Բետոնե մախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	խմ	2	43.822	87.64
31	ՕՇՊ սալերի տեղադրում (բիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	25.4	4.055	102.99
32	Գլանափաթեթավոր, բիտումա-պոլիմերային «ՇԵՇ » մոդիֆիկացված նյութից ջրամեկուսիչ թաղանթի փռում, պրայմեր «ՇԵՇ ԿՈՍՊԱԼ » նյութի քսումով	քմ	25.4	3.181	80.80
33	Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում	քմ	25.4	11.601	294.67
34	200մմ բարձրությամբ միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.61	76.559	46.70
35	Արցունքաթափ գունավոր ներկվածքով թիթեղ 250 մմ լայնությամբ	քմ	2.08	8.118	16.89
36	գունավոր ներկվածքով թիթեղ 150մմ լայնությամբ	քմ	6.45	8.118	52.36
37	Թասակ ցինկապատ թիթեղից գործարանային ներկածածկույթով	քմ	2.05	8.118	16.64
38	Տանիքի ցվիզի իրականացում գունավոր, ներկված 7024 գույնի 15*240մմ չափերի մետաղական սայրինգներով. Եզրապատված 24*18 պրոֆիլից, ամրացնելով փայտե 50*50 չափի չորտուներով. կավարամածի պատրաստումով՝ հականեխիչ և հակահրդեհային մշակումով	քմ	92	18.557	1 707.21
39	Օդափոխության հորանի ՕՇՊ սալերի տեղադրում 10մմ հաստ	քմ	29.4	4.055	119.21
40	Օդափոխության հորանի Գլանափաթեթավոր, բիտումա-պոլիմերային „ՇԵՇ“, մոդիֆիկացված նյութից ջրամեկուսիչ թաղանթի փռում, պրայմեր ,ՇԵՇ ԿՈՍՊԱԼ,, նյութի քսումով	քմ	29.4	3.181	93.52
41	Օդափոխության հորանի Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված բիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	29.4	11.601	341.07
42	Օդափոխության հորանի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	2.1	320.979	674.06
43	Օդափոխության հորանի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.82	796.360	653.02
44	Օդափոխության հորանի ցինկապատ թիթեղ $\delta=0.5$ մմ	քմ	56.2	6.773	380.65
45	Հարդարման աշխատանքներ Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	192.1	4.649	893.05
46	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	8.020	81.26
47	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	82	5.163	423.33
48	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	379.62	3.677	1 395.88
48	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2579.0	2.094	5 399.68
49	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	413	1.434	592.26

1	2	3	4	5	6
50	Առաստաղների բարձրորակ ներկում լատեկսային ներկով	քմ	1275.7	2.448	3 123.51
51	Առաստաղների բարելավված ներկում լատեկսային ներկով	քմ	93.04	1.660	154.44
52	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	523.60	3.621	1 896.14
53	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	109	12.898	1 405.87
54	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9,5մմ հաստությամբ, ստատների տեղադրումով	քմ	61.73	7.297	450.42
55	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	10.53	4.654	49.01
56	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0.59	778.555	459.35
57	Նույնի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.59	39.062	23.05
58	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով	քմ	3.45	22.158	76.45
59	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով	քմ	8.22	14.648	120.41
60	Թեքահարթակի միաձույլ ե/բետոնե բազրիքների պատրաստում 120մմ հաստության В-12,5 դասի բետոնով	խմ	1.5	130.478	195.72
61	Ամրան Փ10A500C	տն	0.12	382.894	45.95
62	60x40x3մմ պողպատե ուղղանկյուն խողովակներից բռնաձող	տն	0.106	738.701	78.66
63	Նույնի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.106	39.062	4.16
64	Արտաքին հարդարում Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ հաստ.) բազալտե մանրաթելային սալերով	քմ	61.6	13.569	835.87
65	V-4, V-5 արտաքին վիտրաժների վերևի մասի և շեփերի երեսապատում այլումինե «Alukobond» թիթեղով	քմ	3.5	35.990	125.97
66	Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ. խարսխումով	քմ	40.980	27.107	1 110.85
67	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 30մմ հաստ.	քմ	13.61	17.569	239.02
68	Արտաքին շեփերի երեսապատում այլումինե «Alukobond» թիթեղով	քմ	68.0	35.990	2 447.32
69	Արտաքին պատերի երեսապատում 8մմ հաստությամբ ֆիբրացեմենտե սալերով, ներկված գործարանային պայմաններում ջերմամշակմամբ, առանց ասբոցեմենտային հավելումի RAL 2007-- և RAL1015 գույնի	քմ	380	22.863	8 687.78
70	Ապակեպլաստե մանրաթելային ուղղանկյուն խողովակ 50x43մմ	գծմ	674.55082	2.377	1 603.12
71	Ապակեպլաստե մանրաթելային ուղղանկյուն պրոֆիլ 50x60մմ	գծմ	632.97	2.377	1 504.30
72	Ապակեպլաստե մանրաթելային ուղղանկյուն պրոֆիլ 50x150մմ	գծմ	120.12	6.021	723.20
73	Ապակեպլաստե մանրաթելային անկյունակներ պատրաստված ուղղանկյուն խողովակից 50x43մմ	գծմ	124.75	1.188	148.24
74	Այլումինե մոնտաժային ձևավոր պրոֆիլ 32x8մմ	գծմ	951.76	1.268	1 206.37
75	Պտուտակային, ապակեպատ ամբարձիչի մոնտաժում հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ FORSTOR կամ համարժեք	հատ	1	3235.670	3 235.67
ԸՆԴԱՄԵՆԸ					78 743.72
1-2. Ջեռուցում					
1	Նկուղ Այլումինե ջեռուցման սարքերի տեղադրում	կվտ	1.1	1.198	1.35
2	Ջեռուցման սարքերի արժեքը h=500մմ	սեկց	8	6.338	50.70
3	Ջերմակարգավորիչ փական Փ20մմ	հատ	2	9.189	18.38
4	Փական անցումային Փ20մմ	հատ	2	6.681	13.36
5	Ավտոմատ օդահան փական Փ15մմ	հատ	2	5.804	11.61

1	2	3	4	5	6
6	Մետաղ ռադիատորների և խողովակների ամրացման համար	կգ	7	0.829	5.80
7	0,00 միջից վերև Ալյումինե ջեռուցման սարքերի տեղադրում	կվտ	13.6	1.198	16.25
8	Ջեռուցման սարքերի արժեքը h=500մմ	սեկց	96	6.338	608.40
9	Ջեռուցման սարքերի արժեքը h=350մմ	սեկց	10	6.569	65.69
10	Ջերմակարգավորիչ փական Փ20մմ	հատ	3	9.189	27.57
11	Ջերմակարգավորիչ փական Փ25մմ	հատ	1	11.303	11.30
12	Փական անցումային Փ20մմ	հատ	5	6.681	33.41
13	Փական անցումային Փ25մմ	հատ	1	8.134	8.13
14	Ավտոմատ օդահան փական Փ15մմ	հատ	5	5.804	29.02
15	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 Փ25x3,5մմ	զժմ	20	4.227	84.55
16	Նույնը, Փ32x4,5մմ	զժմ	1	4.210	4.21
17	Նույնը, Փ40x5,6մմ	զժմ	10	7.077	70.77
18	Նույնը, Փ50x6,9մմ	զժմ	20	8.552	171.04
19	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° Փ20մմ	հատ	23	0.051	1.17
20	Նույնը, Փ25մմ	հատ	5	0.084	0.42
21	Նույնը, Փ32մմ	հատ	5	0.174	0.87
22	Նույնը, Փ40մմ	հատ	5	0.458	2.29
23	Նույնը, Փ50մմ	հատ	9	0.821	7.39
24	Պոլիպրոպիլենային անկյունակ 45° Փ20մմ	հատ	1	0.051	0.05
25	Նույնը, Փ25մմ	հատ	1	0.084	0.08
26	Նույնը, Փ50մմ	հատ	2	0.741	1.48
27	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Փ32x20x32մմ	հատ	1	0.261	0.26
28	Նույնը, Փ40x20x40մմ	հատ	1	0.387	0.39
29	Նույնը, Փ40x25x40մմ	հատ	1	0.409	0.41
30	Նույնը, Փ50x20x50մմ	հատ	1	0.681	0.68
31	Շրջանցիկ ծունկ Փ20մմ	հատ	4	0.089	0.35
32	Նույնը, Փ25մմ	հատ	1	1.521	1.52
33	Մետաղ ռադիատորների և խողովակների ամրացման համար	կգ	15	0.829	12.43
	ԸՆԴԱՄԵՆԸ				1 261.34
	1-3. Օդափոխություն (նկուղ)				
1	Ներածման-արտածման սարք, Lն=1470խմ/ժամ, Lա=1320խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=8,5կՎտ 3) օդի պտտվող ռեկուլտերատոր 4) օդամղիչ ներածման Lն=1470մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Lա=1320մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	հատ	0.2	3454.740	690.95
2	ճաղաչար պլաստմասայից Փ200մմ	հատ	5	0.482	2.41
3	Նույնը 200x100	հատ	3	0.555	1.66
4	Նույնը 200x200	հատ	1	0.634	0.63
5	Նույնը 300x200	հատ	6	0.951	5.70
6	Նույնը 300x250	հատ	6	1.268	7.61
	ԸՆԴԱՄԵՆԸ				708.97
	1-4. Օդափոխություն 0,00 միջից վերև				

1	2	3	4	5	6
1	Ներածման-արտածման սարք, L _ն =3600խմ/ժամ, L _ա =3200խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕԴ=31,2կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման L _ն =3600մ3/ժամ 5) օդամղիչ արտածման L _ա =3200մ3/ժամ, 6) աղմկախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	հատ	0.2	4376.004	875.20
2	Ներածման-արտածման սարք, L _ն =2400խմ/ժամ, L _ա =2400խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕԴ=19,8կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման L _ն =2400մ3/ժամ 5) օդամղիչ արտածման L _ա =2400մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	հատ	0.2	4030.530	806.11
3	Ներածման-արտածման սարք, L _ն =7165խմ/ժամ, L _ա =6140խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕԴ=58,8կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման L _ն =5885մ3/ժամ 5) օդամղիչ արտածման L _ա =4860մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	հատ	0.2	6957.463	1 391.49
4	Ճաղաչար պլաստմասայից Φ 200մմ	հատ	20	0.482	9.65
5	Նույնը 200x200	հատ	3	0.634	1.90
6	Նույնը 300x300	հատ	14	1.109	15.53
7	Նույնը 350x350	հատ	18	1.426	25.67
8	Նույնը 400x200	հատ	82	1.426	116.93
9	Նույնը 400x300	հատ	10	1.901	19.01
10	Նույնը 400x400	հատ	2	1.901	3.80
11	Նույնը 500x500	հատ	5	2.377	11.88
12	Ալյումինե, դրսի ճաղաչար 300x900	հատ	3	12.358	37.07
13	Նույնը 400x900	հատ	4	14.893	59.57
14	Նույնը 400x1000	հատ	3	16.161	48.48
15	Օդատար ցինկապատ քիթեղից $\delta=0.5$ մմ	քմ	63.8	6.773	432.13
16	Օդատարների մեկուսացում հանքային բամբակով $\delta=50$ մմ	քմ	35	8.660	303.10
17	Մետաղ օդատարների ամրացման համար	կգ	120	0.829	99.42
	Համակարգի թողարկում և կարգաբերում				11.66
	ԸՆԴԱՄԵՆԸ				4 268.62
	1-5. Ն-1---Ն-5 ներածման համակարգերի ջերմամատակարարում				
1	Նկուղ Փական անցումային, խցանային Φ 25մմ	հատ	2	8.134	16.27
2	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° Φ 25մմ	հատ	6	0.084	0.50
3	Նույնը, Φ 32մմ	հատ	4	0.174	0.70
4	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 40x32x40մմ	հատ	2	0.786	1.57
5	Φ 25x3,5մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով $\delta=10$ մմ	մ	18	0.555	9.98
6	Մետաղ խողովակների ամրացման համար	կգ	0.6	0.829	0.50

1	2	3	4	5	6
7	0,00 Գիշից վերև Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 Φ25x3,5մմ	զծմ	11	4.227	46.50
8	Նույնը, Φ32x4,5մմ	զծմ	13	4.210	54.73
9	Նույնը, Φ40x5,6մմ	զծմ	133	7.077	941.17
10	Նույնը, Φ63x8,7մմ	զծմ	17	11.978	203.62
11	Հաշվեկշիռ փական Φ15մմ	հատ	1	7.077	7.08
12	Նույնը, Φ20մմ	հատ	1	9.189	9.19
13	Նույնը, Φ25մմ	հատ	2	11.303	22.61
14	Փական անցումային, խցանային Φ25մմ	հատ	2	8.134	16.27
15	Նույնը, Φ32մմ	հատ	2	9.533	19.07
16	Նույնը, Φ40մմ	հատ	4	10.800	43.20
17	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° Φ25մմ	հատ	4	0.084	0.34
18	Նույնը, Φ32մմ	հատ	6	0.174	1.05
19	Նույնը, Φ40մմ	հատ	10	0.458	4.58
20	Նույնը, Φ63մմ	հատ	2	1.201	2.40
21	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ40x32x40մմ	հատ	2	0.849	1.70
22	Նույնը, Φ40x40x63մմ	հատ	2	0.982	1.96
23	Նույնը, Φ63x25x63մմ	հատ	2	1.082	2.16
24	Շրջանցիկ ծունկ Φ25մմ	հատ	1	1.521	1.52
25	Նույնը, Φ32մմ	հատ	1	0.279	0.28
26	Նույնը, Φ40մմ	հատ	1	0.824	0.82
27	Φ25x3,5մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով δ=10 մմ	մ	11	0.555	6.10
28	Նույնը, Φ32x4,5մմ խողովակների	մ	13	0.634	8.24
29	Նույնը, Φ40x5,6մմ խողովակների	մ	133	0.792	105.36
30	Նույնը, Φ63x8,7մմ խողովակների	մ	17	1.109	18.85
31	Մետաղ խողովակների ամրացման համար	կգ	26	0.829	21.54
	ԸՆԴԱՄԵՆԸ				1 569.86
	1-6. Կաթսայատան սարքավորումներ				
1	Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա «Северянин» Q=120կվտ հզորությամբ	կ-տ	1	980.867	980.87
2	Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա «Северянин» Q=90կվտ հզորությամբ	կ-տ	1	825.289	825.29
3	Ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 120/250-40T մակնիշի (сдвоенный) G=4,05լսմ/ժ, H=11մ, N=536- -339վտ, n=2780---2080պտ/րոպ	կ-տ	1	407.987	407.99
4	Օդափոխության համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 60/250-40T մակնիշի (сдвоенный) G=6,46լսմ/ժ, H=6,6մ, N=348- --232վտ, n=2650---1520պտ/րոպ	կ-տ	1	672.851	672.85
5	(+3,3 Գիշի) ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DMH 30/250-40T մակնիշի (сдвоенный) G=0,352լսմ/ժ, H=2,9մ, N=192--8,8վտ, n=1440---1260պտ/րոպ	կ-տ	1	569.208	569.21
6	(-3,3 Գիշի) ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DMH 30/250-40T մակնիշի (сдвоенный) G=0,23լսմ/ժ, H=2,9մ, N=192--8,8վտ, n=1440---1260պտ/րոպ	կ-տ	1	511.629	511.63
7	Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=11,15լսմ/ժ, H=7,6մ, N=410--235վտ, n=1400---1130պտ/րոպ	կ-տ	1	384.956	384.96
8	Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=6,8լսմ/ժ, H=7,8մ, N=410-- 235վտ, n=1400---1130պտ/րոպ	կ-տ	1	367.682	367.68
9	Ընդարձակիչ անոթ թաղանթային V=600լ Φ750մմ H=1830մմ	հատ	1	68.299	68.30
10	Բաշխիչ և հավաքող կոլեկտոր պոլիպրոպիլենային խողովակից Φ125x17,1մմ L=1,45մ	հատ	2	45.739	91.48
11	Շվեյլեր N20 L=0,85մ 4հատ	մ	3,4	13.483	45.84
12	Դեֆլեկտոր Φ250մմ	հատ	1	40.535	40.53
13	Օդատար ցիմկապատ փթեղից δ=0,6մմ Φ250մմ	քմ	1,5	8.068	12.10
14	Ճկուն խողովակ Φ75x10,4մմ L=0,3մ	հատ	4	4.278	17.11

1	2	3	4	5	6
15	Նույնը. Փ63x8,7մմ L=0,3մ	հատ	4	3.803	15.21
16	Փ25x3,5մմ L=0,3մ	հատ	2	3.169	6.34
17	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 PPR Փ20x2,8մմ	գծմ	7	4.613	32.29
18	Նույնը. Փ25x3,5մմ	գծմ	8	4.227	33.82
19	Նույնը. Փ40x5,6մմ	գծմ	3	7.077	21.23
20	Նույնը. Փ63x8,7մմ	գծմ	15	11.978	179.67
21	Նույնը. Փ75x10,4մմ	գծմ	18	13.140	236.52
22	Նույնը. Փ110x15,2մմ	գծմ	5	19.792	98.96
23	Սողմակ կցաշուրթային ձեռքի կարգավորումով 30x66p Փ80մմ	հատ	8	30.213	241.70
24	Փական անցումային խցանային Փ65 15x8ո	հատ	4	18.089	72.35
25	Նույնը, Փ40	հատ	1	9.533	9.53
26	Նույնը, Փ25	հատ	4	6.839	27.36
27	Նույնը, Փ20	հատ	19	6.364	120.92
28	Ավտոմատ օդահան փական Փ20մմ	հատ	6	5.804	34.82
29	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° Փ20մմ	հատ	8	0.051	0.41
30	Նույնը, Փ25մմ	հատ	7	0.084	0.59
31	Նույնը, Փ40մմ	հատ	3	0.458	1.37
32	Նույնը, Փ63մմ	հատ	9	1.201	10.81
33	Նույնը, Փ75մմ	հատ	16	2.060	32.96
34	Նույնը, 45° Փ75մմ	հատ	2	2.377	4.75
35	Փ20x2,8մմ խողովակների ջերմամեկուսացում ռետիմե մեկուսիչով ձ=10 մմ	մ	7	0.475	3.33
36	Նույնը, Փ25x3,5մմ խողովակների	մ	8	0.555	4.44
37	Նույնը, Փ63x8,7մմ խողովակների	մ	15	1.109	16.64
38	Նույնը Փ75x10,4մմ խողովակների	մ	18	8.171	147.08
39	Մետաղ խողովակների ամրացման համար	կգ	18	0.829	14.91
	ԸՆԴԱՄԵՆԸ				6 363.83
	1-7. Սառը ջրի մատակարարման ներքին ցանց				
1	Նկուղ Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով, քլորացումով և կցամասերի տեղադրումով PN10 Փ20x2,8մմ	գծմ	10	4.614	46.14
2	Նույնը, Փ25x3,5մմ	գծմ	5	4.227	21.14
3	Նույնը, Փ63x8,6մմ	գծմ	5	11.978	59.89
4	Փ20x2,8մմ խողովակների ջերմամեկուսացում ռետիմե մեկուսիչներով ձ=10 մմ	մ	10	0.475	4.75
5	Նույնը, Փ25x3,5մմ խողովակների	մ	5	0.555	2.77
6	Նույնը, Փ63x8,6մմ խողովակների	մ	5	1.109	5.55
7	Փական բրոնզե Փ20մմ	հատ	1	6.364	6.36
8	Փական անկյունային Փ15մմ	հատ	4	5.493	21.97
9	Լվացարանի ծորակ-խառնիչ	հատ	2	10.252	20.50
	0,00 միջից վերև			0.000	
10	Ջրամատակարարման պողպատե խողովակների տեղադրում Փ57x3,5 մմ	գծմ	85	3.380	287.33
11	Փական բրոնզե Փ15մմ	հատ	12	5.493	65.91
